

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

### ԵՐՐՈՐԴ ԵՐԿՐՆԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

(2009 թվականի հունիսի 9, Մոսկվա)

Բելառուսի Հանրապետության Կառավարությունը, Ղազախստանի Հանրապետության Կառավարությունը եւ Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

հիմնվելով «Միասնական մաքսային տարածք ստեղծելու եւ մաքսային միություն ձեւավորելու մասին» 2007 թվականի հոկտեմբերի 6-ի համաձայնագրի եւ «Մաքսային միության հանձնաժողովի մասին» 2007 թվականի հոկտեմբերի 6-ի համաձայնագրի վրա,

նպատակ ունենալով կիրարկել «Երրորդ երկրների առնչությամբ ոչ սակագնային կարգավորման միասնական միջոցների մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագիրը եւ ապահովել Մաքսային միության արդյունավետ գործունեությունը,

ղեկավարվելով միջազգային իրավունքի՝ համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքներով եւ նորմերով,

համաձայնեցին ներքոհիշյալի շուրջ՝

### Հոդված 1

#### Ընդհանուր դրույթներ

1. Սույն Համաձայնագրով սահմանվում է՝ երրորդ երկրների առնչությամբ՝ ապրանքների արտաքին առեւտրի հետ կապված եւ Կողմ հանդիսացող պետությունների ազգային շահերից ելնելով սահմանվող ոչ սակագնային կարգավորման միասնական միջոցները, ինչպես նաեւ ապրանքների արտաքին առեւտրի նկատմամբ հատուկ

արգելքները եւ սահմանափակումները (այսուհետ՝ կարգավորման միջոցներ) միասնական մաքսային տարածքում սահմանելու եւ կիրառելու կարգը:

2. Մաքսային միության բարձրագույն մարմնի կողմից՝ երրորդ երկրների առնչությամբ կարգավորման միջոցներ կիրառելու իրավասությունները Մաքսային միության հանձնաժողովին (այսուհետ՝ Հանձնաժողով) վերապահելու օրվանից սկսած կարգավորման միջոցները սահմանվում են Հանձնաժողովի որոշմամբ, բացառությամբ այն միջոցների, որոնք նախատեսված են սույն Համաձայնագրի 8-րդ եւ 9-րդ հոդվածներով:

3. Ապրանքները, որոնց նկատմամբ կիրառվում են կարգավորման միջոցներ, ներառվում են այն ապրանքների միասնական ցանկում, որոնց նկատմամբ կիրառվում են մաքսային միության մասնակից պետությունների կողմից իրականացվող ներսրբերման կամ դուրսհանման արգելքներ կամ սահմանափակումներ Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում՝ երրորդ երկրների հետ իրականացվող առևտրի ժամանակ (այսուհետ՝ միասնական ցանկ): Միասնական ցանկը հաստատվում է Հանձնաժողովի կողմից՝ սկսած կարգավորման միջոցներ կիրառելու վերաբերյալ որոշումներ ընդունելու իրավասություններն իրեն վերապահելու օրվանից:

4. Հանձնաժողովի կողմից առանձին ապրանքատեսակի նկատմամբ կարգավորման միջոց սահմանելու մասին որոշում ընդունելուց հետո, Հանձնաժողովը այն ներառում է միասնական ցանկում:

## **Հոդված 2**

### **Հանձնաժողովի կողմից ոչ սակագնային կարգավորման միասնական միջոցներ սահմանելու, կիրառելու եւ դրանք վերացնելու մասին որոշումների ընդունումը**

1. Հանձնաժողովը որոշումներ է ընդունում ոչ սակագնային կարգավորման միասնական միջոցներ սահմանելու, կիրառելու եւ վերացնելու մասին (այսուհետ՝ ոչ սակագնային կարգավորման միջոցներ) «Երրորդ երկրների առնչությամբ ոչ սակագնային կարգավորման միասնական միջոցների մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագրի 3 - 6-րդ հոդվածների համաձայն.

2. Հանձնաժողովը քննարկում է առանձին ապրանքատեսակի նկատմամբ ոչ սակագնային կարգավորման միջոց սահմանելու առաջարկն այն փաստաթղթերի հիման վրա, որոնք ներառում են՝

ապրանքի անվանումը եւ դրա ծածկագիրն արտաքին տնտեսական գործունեության Միասնական ապրանքային անվանացանկին համապատասխան, որը հաստատվում է Մաքսային միության բարձրագույն մարմնի կողմից (ԱՏԳ ՄԱԱ),

ոչ սակագնային կարգավորման առաջարկվող միջոցները,

արտահանման արգելքը,

արտահանման եւ (կամ) ներմուծման քանակական սահմանափակում,

արտահանման եւ (կամ) ներմուծման բացառիկ իրավունքի շնորհում,

լիցենզավորում ապրանքների արտաքին առևտրի ոլորտում,

արտահանման եւ (կամ) ներմուծման նկատմամբ վերահսկողությունը

ոչ սակագնային կարգավորման առաջարկվող միջոցների գործողության ժամկետը (միջոցների գործողության ժամկետների սկիզբը եւ ավարտը),

ոչ սակագնային կարգավորման միջոցներ սահմանելու անհրաժեշտության հիմնավորում սույն Համաձայնագրի 3 - 5-րդ հոդվածների դրույթների համաձայն:

Առաջարկը կարող է ներկայացվել թե՛ Կողմի (Կողմերի), եւ թե՛ Հանձնաժողովի նախաձեռնությամբ:

3. Ոչ սակագնային կարգավորման միջոցներ սահմանելու մասին որոշումն ընդունվում է Հանձնաժողովի կողմից ոչ ուշ քան Կողմի (Կողմերը) կողմից առաջարկ ներկայացնելու օրվանից հաշված 30 օրվա ընթացքում:

4. Ոչ սակագնային կարգավորման միջոցների սահմանման, կիրառման եւ վերացման մասին Հանձնաժողովի որոշումները հրապարակվում են 2008 թվականի դեկտեմբերի 12-ի՝ Մաքսային միության հանձնաժողովի գործունեության Ընթացակարգային կանոններին համապատասխան եւ ուժի մեջ են մտնում ոչ ուշ քան հրապարակման օրվանից 45 օրվա ընթացքում:

### Հոդված 3

#### Արգելքներ կամ քանակական սահմանափակումներ

1. Քանակական սահմանափակումներ, այդ թվում՝ ապրանքներ արտահանելու արգելքներ սահմանելու անհրաժեշտության հիմնավորումը պետք է ներառի՝

(ա) ապրանքների արտահանման դեպքում՝

Մաքսային միության տարածքում արտադրության ծավալների եւ տվյալ ապրանքի նկատմամբ պահանջարկի մասին տեղեկություններ (բնաիրային եւ արժեքային արտահայտությամբ), վիճակագրական տվյալներ, ֆինանսատնտեսական հաշվարկներ եւ այլ տվյալներ, որոնցով հիմնավորվում է դուրս հանելու համար ապրանքների թույլատրված ծավալները, եւ որոնք հնարավորություն են տալիս կանխել կամ կրճատել Մաքսային միության ներքին շուկայում տվյալ ապրանքի ծայրահեղ պակասը՝ «Երրորդ երկրների առնչությամբ ոչ սակագնային կարգավորման միասնական միջոցների մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագրի 3-րդ հոդվածով նախատեսված դեպքերում,

տեղեկություններ միասնական մաքսային տարածքից ապրանքների արտահանման ծավալի մասին՝

(բ) ապրանքի ներմուծման դեպքում՝

տեղեկություններ ապրանքների արտադրական եւ վաճառքի ծավալների մասին (բնաիրային եւ արժեքային արտահայտությամբ), վիճակագրական տվյալներ, ֆինանսատնտեսական հաշվարկներ եւ այլ տվյալներ, որոնցով հիմնավորվում է ցանկացած ձեռով ներկրվող գյուղատնտեսական ապրանքների կամ ջրային բիոռեսուրսների ներմուծումը սահմանափակելու անհրաժեշտությունը՝ «Երրորդ երկրների առնչությամբ ոչ սակագնային կարգավորման միասնական միջոցների մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագրի 3-րդ հոդվածով նախատեսված դեպքերում,

տվյալ ապրանքի՝ միասնական մաքսային տարածք ներմուծելու ծավալների մասին տեղեկություններ:

2. Հանձնաժողովի կողմից միասնական մաքսային տարածքում քանակական սահմանափակումներ սահմանելիս՝ կիրառվում են արտահանման եւ (կամ) ներմուծման քվոտաներ: Քանակական սահմանափակումներ կիրառվում են՝

արտահանման ժամանակ՝ միայն այն ապրանքների նկատմամբ, որոնք ծագում են միասնական մաքսային տարածքից,

ներմուծման ժամանակ՝ միայն այն ապրանքների նկատմամբ, որոնք ծագում են երրորդ երկրներից:

Քանակական սահմանափակումներ չեն կիրառվում որեւէ երրորդ երկրի տարածքից ապրանքի ներմուծման կամ որեւէ երրորդ երկրի տարածքի համար նախատեսված ապրանքի արտահանման ժամանակ՝ բացառությամբ, երբ նման քանակական սահմանափակումները կիրառվում են բոլոր երրորդ երկրներից կատարվող ներմուծման կամ բոլոր երրորդ երկրներ կատարվող արտահանման դեպքում: Սույն դրույթը չի խոչընդոտում Կողմ հանդիսացող պետությունների պարտավորությունների կատարմանը ազատ առետրի գոտու մասին միջազգային պայմանագրերի համաձայն:

Այն ապրանքները, որոնց նկատմամբ կարելի է սահմանել արտահանման քանակական սահմանափակումներ, պետք է ընդգրկված լինեն Մաքսային միության ներքին շուկայի համար էապես կարեւոր ապրանքների ցանկում, որոնց նկատմամբ բացառիկ դեպքերում կարող են սահմանվել ժամանակավոր սահմանափակումներ կամ արտահանման արգելքներ (այսուհետ՝ էապես կարեւոր ապրանքների ցանկ):

Էապես կարեւոր ապրանքների ցանկը հաստատվում է Հանձնաժողովի կողմից ոչ ուշ քան՝ երրորդ երկրների առնչությամբ ոչ սակագնային կարգավորման միջոցները Կողմերի ներկայացրած առաջարկների հիման վրա կիրառելու իրավասություններն իրեն վերապահելու օրվանից հաշված 30 օրվա ընթացքում:

3. Հանձնաժողովը արտահանման եւ (կամ) ներմուծման քվոտաների ծավալը բաշխում է Կողմ հանդիսացող պետությունների միջեւ ինչպես նաեւ Կողմ հանդիսացող պետությունների արտաքին առետրային գործունեության մասնակիցների միջեւ սահմանում է արտահանման եւ (կամ) ներմուծման քվոտաների չափաբաժնի բաշխման մեթոդը, ինչպես նաեւ, անհրաժեշտության դեպքում, երրորդ երկրների միջեւ բաշխում է ներմուծման քվոտայի ծավալը:

Կողմ հանդիսացող պետությունների միջեւ արտահանման եւ (կամ) ներմուծման քվոտաների ծավալների բաշխումն իրականացվում է Հանձնաժողովի կողմից՝ կախված այն խնդիրներից, որոնց լուծումը առաջարկվում է գտնել քանակական սահմանափակումներ սահմանելու միջոցով՝ հաշվի առնելով Կողմերի ներկայացրած առաջարկները ըստ յուրաքանչյուր Կողմ հանդիսացող պետությունում ապրանքների արտադրության եւ (կամ) սպառման ծավալների:

4. Արտահանման եւ (կամ) ներմուծման քվոտաներ կիրառելու մասին որոշում ընդունելիս՝ Հանձնաժողովը ապահովում է՝

որոշակի ժամկետով արտահանման եւ (կամ) ներմուծման քվոտաներ (անկախ դրանց՝ երրորդ երկրների միջեւ բաշխված լինելու հանգամանքից) սահմանելը,

բոլոր շահագրգիռ երրորդ երկրներին իրենց հատկացված ներմուծման քվոտայի ծավալի մասին տեղեկացնելն այն դեպքում, երբ ներմուծման քվոտաները բաշխվում են երրորդ երկրների միջեւ,

արտահանման եւ (կամ) ներմուծման քվոտաների կիրառման, դրանց ծավալի եւ գործողության ժամկետի, ինչպես նաեւ երրորդ երկրների միջեւ ներմուծման քվոտաներ բաշխելու մասին տեղեկություններ հրապարակելը:

5. Ներմուծման քվոտաների բաշխումը երրորդ երկրների միջեւ՝ Հանձնաժողովի կողմից նման որոշում ընդունելու դեպքում, որպես կանոն, իրականացվում է Հանձնաժողովի կողմից երրորդ երկրների բոլոր հիմնական մատակարարների հետ խորհրդակցության արդյունքների հիման վրա:

Սույն հոդվածում «երրորդ երկրի հիմնական մատակարար» նշանակում է մատակարար, որն ունի տվյալ ապրանքի ներմուծման 5 եւ ավելի տոկոս չափաբաժին միասնական մաքսային տարածքում:

6. Այն դեպքում, երբ ներմուծման քվոտաների բաշխումն անհնար է իրականացնել երրորդ երկրների հիմնական մատակարարների հետ խորհրդակցության արդյունքների հիման վրա, երրորդ երկրների միջեւ քվոտաների բաշխման մասին որոշումը պետք է ընդունվի Հանձնաժողովի կողմից՝ հաշվի առնելով նախորդող ժամանակահատվածում այդ երկրներից կատարված ապրանքի մատակարարումների ծավալը:

7. Հանձնաժողովը չի սահմանում որեւէ այնպիսի պայման կամ ձեւական պահանջ, որը կարող է խոչընդոտել որեւէ երրորդ երկրի լիարժեք կիրառելու իրեն հատկացված ներմուծման քվոտան՝ պայմանով, որ նման ապրանքի մատակարարումն իրականացվի ներմուծման քվոտայի գործողության ժամկետի շրջանակներում:

8. Նախորդող ժամանակահատվածի ընտրությունն այն ապրանքի համար, որի առնչությամբ սահմանվում է արտահանման եւ (կամ) ներմուծման քվոտա, իրականացվում է Հանձնաժողովի կողմից: Ընդ որում, նման ժամանակահատված են համարվում ցանկացած նախորդող երեք տարիները, որոնց վերաբերյալ առկա են արտահանման եւ (կամ) ներմուծման իրական ծավալների մասին տեղեկություններ: Նախորդող ժամանակահատված ընտրելու հնարավորության բացակայության դեպքում, արտահանման եւ (կամ) ներմուծման քվոտաները բաշխվում են արտահանման եւ (կամ) ներմուծման իրական ծավալների ամենահավանական բաշխումը գնահատելու հիման վրա:

Սույն հոդվածում «արտահանման եւ (կամ) ներմուծման իրական ծավալներ» նշանակում է արտահանման եւ (կամ) ներմուծման ծավալներ՝ դրանց նկատմամբ սահմանափակումների բացակայության պայմաններում:

9. Ապրանքի մատակարարմամբ հետաքրքրված ցանկացած երրորդ երկրի պահանջի առկայության դեպքում, Հանձնաժողովը այդ երկրի հետ պետք է անցկացնի խորհրդակցություններ՝

սահմանված ներմուծման քվոտան վերաբաշխելու անհրաժեշտության վերաբերյալ, ընտրված նախորդող ժամանակահատվածի փոփոխության վերաբերյալ,

ներմուծման քվոտայի բաշխման կամ դրա սահմանափակ կիրառման առնչությամբ միակողմանիորեն սահմանված պայմանների, ձեւական պահանջների կամ ցանկացած այլ դրույթ վերացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

10. Արտաքին առևտրային գործունեության մասնակիցների միջեւ արտահանման եւ (կամ) ներմուծման քվոտաների չափաբաժնի բաշխումն իրականացնում են Կողմերը՝ Հանձնաժողովի կողմից սահմանված մեթոդով, եւ հիմնվում են՝ արտահանման եւ (կամ) ներմուծման քվոտայի չափաբաժին ստանալու հարցում արտաքին առևտրային գործունեության մասնակիցների իրավահավասարության վրա ինչպես նաեւ՝

սեփականության ձեռի, գրանցման վայրի կամ շուկայում ունեցած դիրքի հիմքով խտրականության բացառման վրա:

11. Արտահանման եւ ներմուծման քվոտաների շրջանակներում ապրանքների մաքսային ձեւակերպումն իրականացվում է նման ապրանքների արտահանման եւ (կամ) ներմուծման լիցենզիայի առկայության դեպքում, որը տրամադրվում է Կողմ հանդիսանցող պետության գործադիր իշխանության պետական իրավասու մարմնի կողմից:

12. Բացի երրորդ երկրների միջեւ ներմուծման քվոտաներ բաշխելու դեպքերից, Հանձնաժողովը չպետք է պահանջի, որպեսզի լիցենզիան օգտագործվի տվյալ ապրանքի արտահանման (ներմուծման) համար՝ դեպի որեւէ առանձին երկիր եւ (կամ) որեւէ առանձին երկրից:

13. Արտահանման եւ (կամ) ներմուծման քվոտաներ կիրառելիս Հանձնաժողովը պետք է՝

նշված ապրանքի առետորով հետաքրքրված երրորդ երկրի պահանջի առկայության դեպքում, տրամադրի տեղեկություն արտահանման եւ (կամ) ներմուծման քվոտայի բաշխման կարգի, արտաքին առետորային գործունեության մասնակիցների միջեւ դրանց բաշխման մեթոդի եւ քվոտաների ծավալների վերաբերյալ, որի համար տրամադրվել են լիցենզիաներ,

հրապարակի տեղեկություններ այն ապրանքի ընդհանուր քանակի եւ արժեքի մասին, որի արտահանումը եւ (կամ) ներմուծումը կթույլատրվի որոշակի ապագա ժամանակահատվածի ընթացքում, ինչպես նաեւ տեղեկություններ արտահանման եւ (կամ) ներմուծման քվոտաների գործողության ժամկետի սկզբի եւ ավարտի ու դրանցում կատարված ցանկացած փոփոխության մասին:

#### **Հոդված 4**

##### **Ապրանքների առանձին տեսակների արտահանման եւ (կամ) ներմուծման բացառիկ իրավունք**

1. Ապրանքների առանձին տեսակների արտահանման եւ (կամ) ներմուծման բացառիկ իրավունքների տրամադրման միջոցով արտաքին առետորային



գործունեության նկատմամբ սահմանափակումներ նախատեսելու մասին Հանձնաժողովի որոշումն ընդունվում է Կողմերի (Կողմի) առաջարկով:

Ապրանքների առանձին տեսակների արտահանման եւ (կամ) ներմուծման բացառիկ իրավունքներ նախատեսելու անհրաժեշտության հիմնավորումը պետք է ներառի վիճակագրական տվյալներ, ֆինանսատնտեսական հաշվարկներ եւ անհրաժեշտ այլ տեղեկություններ, որոնք կհիմնավորեն ոչ սակագնային կարգավորման տվյալ միջոցի կիրառման նպատակահարմարությունը:

2. Ապրանքների առանձին տեսակները, որոնց համար տրամադրվում է արտահանման եւ (կամ) ներմուծման բացառիկ իրավունք, ինչպես նաեւ ապրանքների առանձին տեսակների արտահանման եւ (կամ) ներմուծման բացառիկ իրավունքներ ստացող կազմակերպությունների շրջանակը Կողմերի կողմից որոշելու կարգը սահմանվում է Հանձնաժողովի որոշմամբ:

Արտաքին առևտրային գործունեության այն մասնակիցները, որոնց Կողմերը Հանձնաժողովի որոշման հիման վրա տրամադրում են ապրանքների առանձին տեսակների արտահանման եւ (կամ) ներմուծման բացառիկ իրավունք, առանձին ապրանքների տեսակների արտահանման եւ (կամ) ներմուծման հետ կապված գործարքները կատարում են խտրականության բացառման սկզբունքի հիման վրա եւ առաջնորդվելով միայն առևտրային նկատառումներով, այդ թվում՝ գնի, որակի, ապրանքի հասանելիության, դրա իրացվելիության, փոխադրման պայմանների եւ առք ու վաճառքի այլ պայմանների նկատառումներով, եւ մյուս Կողմերի կազմակերպություններին (գործարար շրջանառության սովորույթներին համապատասխան) տրամադրում են համապատասխան հնարավորություն նման գնումներին կամ վաճառքներին մասնակցելու հարցում մրցակցելու համար:

Այն ապրանքների ցանկը, որոնց արտահանման եւ (կամ) ներմուծման համար տրամադրվում է բացառիկ իրավունք, ինչպես նաեւ այն կազմակերպությունների ցանկը, որոնց տրամադրվում է առանձին տեսակի ապրանքների արտահանման եւ (կամ) ներմուծման բացառիկ իրավունք, պետք է հրապարակվեն Հանձնաժողովի որոշմանը համապատասխան:

3. Այն ապրանքները, որոնց նկատմամբ կիրառվում են սահմանափակումներ արտահանման եւ (կամ) ներմուծման բացառիկ իրավունք տրամադրելու միջոցով, ներառվում են միասնական ցանկում:

4. Ապրանքների առանձին տեսակների արտահանման եւ (կամ) ներմուծման բացառիկ իրավունքն իրականացվում է այն լիցենզիաների հիման վրա, որոնք Կողմ հանդիսացող պետության գործադիր իշխանության պետական իրավասու մարմինների կողմից տրամադրվում են արտաքին առևտրային գործունեության մասնակիցներին, որոնց շրջանակը սահմանում են Կողմերը Հանձնաժողովի որոշման համաձայն, որը նախատեսված է սույն հոդվածի 2-րդ կետով

## **Հոդված 5**

### **Առանձին տեսակի ապրանքների արտահանման եւ (կամ) ներմուծման նկատմամբ վերահսկողությունը**

1. Առանձին տեսակի ապրանքների արտահանման եւ (կամ) ներմուծման նկատմամբ վերահսկողություն սահմանելու մասին Հանձնաժողովի որոշումն ընդունվում է առանձին տեսակի ապրանքների արտահանման եւ (կամ) ներմուծման դինամիկան դիտանցելու համար:

Առանձին տեսակի ապրանքների արտահանման եւ (կամ) ներմուծման նկատմամբ վերահսկողություն սահմանելու անհրաժեշտության հիմնավորումը տրամադրվում է ինչպես Կողմի (Կողմերի), այնպես էլ Հանձնաժողովի նախաձեռնությամբ: Նման հիմնավորումը պետք է ներառի տեղեկություններ առանձին տեսակի ապրանքների արտահանման եւ (կամ) ներմուծման քանակական ցուցանիշների եւ դրանցում այլ միջոցներով կատարված փոփոխությունների հետազօծելիության անհնարինության մասին:

2. Առանձին տեսակների ապրանքների ցանկը, որոնց նկատմամբ սահմանվում է վերահսկողություն, ինչպես նաեւ դրա գործողության ժամկետները նախատեսվում են Հանձնաժողովի կողմից:

Այն ապրանքները, որոնց նկատմամբ սահմանված է վերահսկողություն, ներառվում են միասնական ցանկում:

3. Առանձին տեսակի ապրանքների արտահանումը եւ (կամ) ներմուծումը, որոնց նկատմամբ սահմանված է վերահսկողություն, իրականացվում է թույլտվությունների հիման վրա, որոնք տրամադրվում են Կողմ հանդիսացող պետության գործադիր իշխանության իրավասու մարմինների կողմից:

4. Թույլտվությունները ձեւակերպվում են ապրանքների արտաքին առետրի ոլորտում լիցենզավորման կանոնների մասին համաձայնագրերով սահմանված կարգով:

5. Թույլտվության բացակայությունը հիմք է հանդիսանում ապրանքների մաքսային ձեւակերպման իրականացումը մերժելու համար:

## **Հոդված 6**

### **Ապրանքների արտաքին առետրին վերաբերող եւ Կողմ հանդիսացող պետությունների ազգային շահերից ելնելով սահմանվող միջոցներ**

1. Ելնելով Կողմ հանդիսացող պետությունների ազգային շահերից եւ «Երրորդ երկրների առնչությամբ ոչ սակագնային կարգավորման միասնական միջոցների մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագրի 7-րդ հոդվածին համապատասխան՝ Հանձնաժողովը Կողմի (Կողմերի) առաջարկությամբ կարող է սահմանել ապրանքների արտաքին առետրին վերաբերող եւ տնտեսական բնույթ չունեցող հետեւյալ միջոցներ՝

ներսերման եւ (կամ) դուրսհանման արգելք,

ներսերման եւ (կամ) դուրսհանման քանակական սահմանափակում,

ներսերման եւ (կամ) դուրսհանման բացառիկ իրավունքի շնորհում,

ներսերումը եւ (կամ) դուրսհանումը թույլատրելու կարգը,

կարգավորման այլ միջոցներ:

2. Հանձնաժողովը քննարկում է Կողմի (Կողմերի)՝ այնպիսի միջոցներ սահմանելու առաջարկները, որոնք նշված են սույն հոդվածի 1-ին կետում՝ ելնելով որոշակի ապրանքների տեսակների առնչությամբ Կողմ հանդիսացող պետությունների ազգային շահերից եւ հիմնվելով այնպիսի փաստաթղթերի վրա, որոնք ներառում են՝

ապրանքի անվանումը եւ ծածկագիրը՝ ԱՏԳ ՄԱԱ-ի համաձայն,

առաջարկվող միջոցները,

առաջարկվող միջոցների գործողության ժամկետը (միջոցի գործողության ժամկետի սկիզբը եւ ավարտը. անհրաժեշտության դեպքում, միջոցի գործողության ժամկետի ավարտը կարող է չնշվել),

միջոցներ սահմանելու անհրաժեշտության հիմնավորումը՝ ներառյալ տեղեկությունները, որոնք հիմնավորում են դրանք սահմանելու անհրաժեշտությունը:

3. Սույն հոդվածի 1-ին կետում նշված միջոցները կիրառելու մասին որոշումն ընդունվում է Հանձնաժողովի կողմից՝ ելնելով Կողմերի ազգային շահերից՝ Կողմի (Կողմերի) կողմից առաջարկ ներկայացնելու օրվանից ոչ ուշ, քան 30 օրվա ընթացքում:

4. Սույն հոդվածի 1-ին կետում նշված միջոցները չպետք է ընդունվեն կամ կիրառվեն այնպիսի եղանակներով, որոնք երրորդ երկրների համար կլինեն կամայական կամ չհիմնավորված խտրականության միջոցներ, եւ չպետք է հանդիսանան ապրանքների արտաքին առետրի քողարկված սահմանափակումներ:

5. Սույն հոդվածի 1-ին կետում նշված միջոցները Կողմ հանդիսացող պետության (պետությունների) ազգային շահերից ելնելով սահմանելու վերաբերյալ Կողմի (Կողմերի) ներկայացրած առաջարկը Հանձնաժողովի կողմից չընդունելու դեպքում, դրանք սահմանելու վերաբերյալ առաջարկ ներկայացրած Կողմը կարող է որոշում ընդունել նման միջոցներ միակողմանիորեն սահմանելու վերաբերյալ՝ սույն Համաձայնագրի 8 - 10-րդ հոդվածներով սահմանված կարգով:

## **Հոդված 7**

### **Ապրանքների արտաքին առետրի արգելման եւ սահմանափակման հատուկ ձեւերը**

1. Հանձնաժողովի որոշմամբ ապրանքների ներմուծումը կարող է սահմանափակվել կարգավորման միջոցներով, այդ թվում՝ այնպիսի միջոցներով, որոնցով շեղում է կատարվում «Երրորդ երկրների առնչությամբ ոչ սակագնային կարգավորման միասնական միջոցների մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագրի 3-րդ եւ 4-րդ հոդվածների դրույթներից, եթե դա անհրաժեշտ է արտաքին ֆինանսական

դրությունը պաշտպանելու եւ վճարային հաշվեկշռի հավասարակշռությունը պահպանելու համար: Հանձնաժողովը քննարկում է նման միջոցներ սահմանելու մասին Կողմի (Կողմերի) ներկայացրած առաջարկն այնպիսի փաստաթղթերի հիման վրա, որոնք ներառում են՝

ապրանքի անվանումը եւ ծածկագիրը՝ ԱՏԳ ՄԱԱ-ի համաձայն,

առաջարկվող միջոցները,

ոչ սակագնային կարգավորման առաջարկվող միջոցների գործողության ժամկետը (միջոցների գործողության ժամկետների սկիզբը եւ ավարտը),

միջոցները սահմանելու անհրաժեշտության հիմնավորումը:

Նշված միջոցները սահմանելու մասին Կողմի (Կողմերի) ներկայացրած առաջարկը Հանձնաժողովի կողմից չընդունելու դեպքում, Կողմը (Կողմերը) կարող է որոշում ընդունել նման միջոցներ միակողմանիորեն սահմանելու մասին՝ սույն Համաձայնագրի 8 - 10-րդ հոդվածներով նախատեսված կարգով:

2. Ապրանքների արտաքին առետուրը Հանձնաժողովի որոշմամբ կարող է սահմանափակվել այնպիսի միջոցներով, որոնց ընդունումն անհրաժեշտ է Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության մասնակից պետությունների կողմից միջազգային սանկցիաների կիրառմանը մասնակցելու համար՝ Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության համաձայն: Հանձնաժողովը սահմանում է այդպիսի միջոցներ Մաքսային միության բարձրագույն մարմնի որոշման հիման վրա:

## **Հոդված 8**

### **Ապրանքների արտաքին առետրի հետ կապված միջոցները միակողմանիորեն սահմանելը**

1. Կողմերը կարող են միակողմանիորեն սահմանել ապրանքների արտաքին առետրին վերաբերող եւ տնտեսական բնույթ չունեցող միջոցներ, (այսուհետ՝ ժամանակավոր միջոցներ), եթե դրանք ուղղված են՝

հասարակական բարոյականության եւ իրավակարգի պահպանմանը,

պաշտպանության եւ անվտանգության ապահովմանը,

քաղաքացիների կյանքի եւ առողջության, շրջակա միջավայրի, կենդանիների եւ բույսերի կյանքի եւ առողջության պաշտպանությանը ,

մշակութային արժեքների եւ մշակութային ժառանգության պաշտպանությանը,

մտավոր սեփականության պաշտպանությանը,

չվերականգնվող բնական ռեսուրսների սպառումը կանխարգելելուն,

ներքին շուկայում պարենային եւ այլ ապրանքների ծայրահեղ պակասը կանխելուն կամ կրճատելուն, որոնք էապես կարելի է ներքին շուկայի համար,

արտաքին ֆինանսական վիճակի պաշտպանությանը եւ վճարային հաշվեկշռի հավասարակշռության ապահովմանը:

2. Այն Կողմը, որը սույն Համաձայնագրի համաձայն սահմանում է ժամանակավոր միջոցներ, նախապես սակայն դրանք սահմանելուց ոչ ուշ, քան 3 օրացուցային օրվա ընթացքում, Հանձնաժողովին տեղեկացնում է դրանք սահմանելու մասին եւ նրա քննարկմանն է ներկայացնում մյուս Կողմերի կողմից ժամանակավոր միջոցները կիրառելու առաջարկ:

3. Ժամանակավոր միջոցներ կիրառելու առաջարկը պետք է ներառի՝

ապրանքի անվանումը եւ ծածկագիրը՝ ԱՏԳ ՄԱԱ-ի համաձայն,

սույն Համաձայնագրի 6-րդ հոդվածով նախատեսված միջոցները,

ապրանքների մատակարարների մասին տեղեկություններ, ապրանքի նույնականացման հատկանիշները, փոխադրման հայտնի միջոցները, այլ տեղեկություններ, որոնք թույլ են տալիս վեր հանել այն ապրանքը, որի առնչությամբ առաջարկվում է սահմանել ժամանակավոր միջոցներ,

ժամանակավոր միջոցների գործողության ժամկետի սկիզբը,

ժամանակավոր միջոցներ կիրառելու անհրաժեշտության հիմնավորումը:

Հիմնավորումը պետք է ներառի՝

Ժամանակավոր միջոցներ սահմանելու իրավական հիմքը (Կողմի նորմատիվ իրավական ակտի անվանումը),

Ժամանակավոր միջոցների սահմանելու անհրաժեշտությունը հավաստող տեղեկություններ,

տեղեկություններ, որոնք հաստատում են այդ ապրանքների անբարենպաստ ազդեցությունը պետության անվտանգության, քաղաքացիների կյանքի եւ առողջության, ֆիզիկական եւ իրավաբանական անձանց սեփականության, պետական կամ համայնքային սեփականության, շրջակա միջավայրի, կենդանիների եւ բույսերի կյանքի եւ առողջության վրա՝ ներսբերումը եւ (կամ) դուրսհանումը թույլատրելու կարգը սահմանելու համար,

քվտայի չափաքանակը՝ ներսբերման եւ (կամ) դուրսհանման նկատմամբ քանակական սահմանափակումներ սահմանելու համար,

արտաքին առևտրային գործունեության մասնակիցների ցանկը, որոնց շնորհվել է բացառիկ իրավունք՝ ներսբերման եւ (կամ) դուրսհանման համար բացառիկ իրավունք տրամադրելու դեպքում:

4. Հանձնաժողովը քննարկում է Կողմի (Կողմերի) ներկայացրած առաջարկը՝ այն ներկայացնելուց ոչ ուշ, քան 30 օրվա ընթացքում:

5. Կողմի (Կողմերի) ներկայացրած առաջարկի քննարկման արդյունքներով Հանձնաժողովը կարող է որոշում ընդունել միասնական մաքսային տարածքում Ժամանակավոր միջոցներ սահմանելու մասին:

Ժամանակավոր միջոցների գործողության ժամկետը տվյալ դեպքում սահմանվում է Հանձնաժողովի որոշմամբ:

6. Եթե մաքսային միասնական տարածքում Ժամանակավոր միջոցներ սահմանելու մասին որոշում չի ընդունվում, ապա Հանձնաժողովը տեղեկացնում է Ժամանակավոր միջոցներ սահմանած Կողմին (Կողմերին), եւ Կողմ հանդիսացող պետությունների մաքսային մարմիններին, որ Ժամանակավոր միջոցները գործում են դրանք սահմանելու օրվանից ոչ ավելի, քան 6 ամսվա ընթացքում:

## Հոդված 9

### Ժամանակավոր միջոցները միակողմանիորեն կիրառելը

1. Միակողմանիորեն ժամանակավոր միջոցներ սահմանելու մասին՝ Կողմից ստացած ծանուցման հիման վրա Հանձնաժողովը անհապաղ տեղեկացնում է Կողմ հանդիսացող պետությունների մաքսային մարմիններին, որ Կողմերից մեկը միակողմանիորեն սահմանել է ժամանակավոր միջոցներ: Տեղեկությունների մեջ նաեւ նշվում է՝

Կողմի նորմատիվ իրավական ակտի անվանումը, որի համաձայն սահմանվում են ժամանակավոր միջոցներ,

ապրանքի անվանումը եւ ծածկագիրը՝ ԱՏԳ ՄԱԱ-ի համաձայն,

տեղեկություններ ապրանքների մատակարարների, ապրանքների նույնականացման հատկանիշների, փոխադրման հայտնի միջոցների մասին եւ այլ տեղեկություններ, որոնցով հնարավոր է վեր հանել այն ապրանքը, որի առնչությամբ սահմանված են ոչ սակագնային կարգավորման միջոցներ:

Ժամանակավոր միջոցներ սահմանելու ամսաթիվը եւ դրանց գործողության ժամկետը:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված տեղեկությունները ստանալուց հետո, Կողմ հանդիսացող պետության մաքսային մարմինները չեն թույլատրում՝

սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված եւ միակողմանիորեն ժամանակավոր միջոցներ կիրառած Կողմ հանդիսացող պետության մաքսային տարածքից ծագող ապրանքների դուրսհանումն առանց տվյալ Կողմ հանդիսացող պետության գործադիր իշխանության իրավասու մարմինների կողմից տրամադրված լիցենզիայի,

սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված եւ միակողմանիորեն ժամանակավոր միջոցներ կիրառած Կողմ հանդիսացող պետության համար նախատեսված ապրանքների ներսբերումն առանց տվյալ Կողմ հանդիսացող պետության գործադիր իշխանության պետական իրավասու մարմինների կողմից տրամադրված լիցենզիայի, Ընդ որում, ժամանակավոր միջոցների չկիրառող Կողմերը անհրաժեշտ ջանքեր են



ներդնում՝ չթույլատրելու համար այդ ապրանքների ներսբերումը ժամանակավոր միջոցներ կիրառած Կողմ հանդիսացող պետության տարածք:

## **Հոդված 10**

### **Արտաքին առևտրի բնագավառում լիցենզավորման կարգը**

1. Միասնական ցանկում ներառված ապրանքների արտաքին առևտրի հետ կապված կարգավորման միջոցների կիրառումը, ինչպես նաև սակագնային քվոտաների կիրառումը, որպես կանոն, իրականացվում է ապրանքների արտահանման եւ (կամ) ներմուծման լիցենզավորման միջոցով:

2. Ապրանքների արտահանման եւ (կամ) ներմուծման լիցենզիաների տրամադրումը իրականացվում է Կողմ հանդիսացող պետությունների արտաքին առևտրային գործունեության մասնակիցների կողմից ներկայացվող հայտի հիման վրա:

3. Լիցենզիաները ձեւակերպվում են ապրանքների արտաքին առևտրի բնագավառում լիցենզավորման կանոնների մասին համաձայնագրով սահմանված կարգով:

4. Լիցենզիայի բացակայությունը հիմք է ծառայում ապրանքների մաքսային ձեւակերպման իրականացումը մերժելու համար:

## **Հոդված 11**

### **Բացառությունները**

Սույն Համաձայնագիրը չի տարածվում Կողմերի այն իրավահարաբերությունների վրա, որոնք վերաբերում են արտահանման վերահսկողության, ռազմատեխնիկական համագործակցության, տեխնիկական կարգավորման, սանիտարական, անասնաբուժական ու բուսասանիտարական պահանջների ու միջոցների, ինչպես նաև հատուկ պաշտպանական, հակազնագցման եւ փոխհատուցման միջոցների կիրառման հարցերին:

## Հոդված 12

### Կարգավորման միջոցների մշակման հրապարակայնությունը

1. Կարգավորման միջոցների սահմանման, կիրառման եւ վերացման մասին Հանձնաժողովի որոշումը կազմելիս՝ Հանձնաժողովը Կողմ հանդիսացող հանդիսացող պետությունների կազմակերպություններին եւ անհատ ձեռնարկատերերին, որոնց տնտեսական շահերի վրա կարող է ազդել նման որոշման ընդունումը (շահագրգիռ անձինք), առաջարկում է Հանձնաժողով ներկայացնել առաջարկություններ եւ դիտողություններ տվյալ հարցի շուրջ:

2. Հանձնաժողովը որոշում է ընդունում խորհրդակցություններ անցկացնելու եղանակի եւ ձեւաչափի մասին, ինչպես նաեւ անցկացվող խորհրդակցությունների ընթացքի եւ արդյունքների մասին տեղեկություններն այն շահագրգիռ անձանց հաղորդելու ձեւաչափի մասին, որոնք ներկայացրել են սեփական առաջարկները եւ դիտողությունները:

3. Կողմ հանդիսացող պետության միջազգային պայմանագրերով նախատեսված լինելու դեպքում, մյուս պետությունների (պետությունների խմբերի) իրավասու մարմիններին առաջարկվում է ներկայացնել իրենց տեսակետները՝ Կողմ հանդիսացող պետությունների համապատասխան միջազգային պայմանագրերի դրույթներով նախատեսված կարգով: Օտարերկրյա կազմակերպություններին եւ ձեռնարկատերերին նաեւ առաջարկվում է ներկայացնել սեփական տեսակետները՝ Կողմ հանդիսացող պետությունների համապատասխան միջազգային պայմանագրերի դրույթներով նախատեսված կարգով:

4. Հանձնաժողովը կարող է որոշում ընդունել խորհրդակցություններ չանցկացնելու մասին սույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ հետեւյալ պայմաններից որեւէ մեկի առկայության դեպքում.

երբ արտաքին առեստրային գործունեություն իրականացնելու իրավունքը շոշափող որոշման նախագծով նախատեսված միջոցները չպետք է հայտնի լինեն մինչեւ որոշումն ուժի մեջ մտնելու պահը, իսկ խորհրդակցություններ անցկացնելը կհանգեցնի կամ կարող է հանգեցնել նման որոշմամբ նախատեսված նպատակին չիրագործմանը,

Երբ խորհրդակցություններ անցկացնելը կհանգեցնի արտաքին առեստրային գործունեություն իրականացնելու իրավունքը շոշափող որոշման ընդունումը ձգձգելուն, ինչը կարող է էական վնաս հասցնել Կողմ հանդիսացող պետությունների շահերին,

ապրանքների առանձին տեսակների արտահանման եւ (կամ) ներմուծման բացառիկ իրավունքի շնորհման դեպքում,

Կողմի (Կողմերի) կողմից միակողմանիորեն կարգավորման միջոցներ սահմանելու դեպքում:

5. Խորհրդակցություններ չանցկացնելը չի կարող հիմք ծառայել Հանձնաժողովի՝ արտաքին առեստրային գործունեություն իրականացնելու իրավունքը շոշափող որոշումն անվավեր ճանաչելու համար:

### **Հոդված 13**

#### **Վեճերի կարգավորումը**

Կողմերի միջեւ սույն Համաձայնագրի մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են բանակցությունների եւ խորհրդակցությունների միջոցով:

Եթե վեճը չի լուծվում Կողմերից մեկի կողմից խորհրդակցություններ եւ բանակցություններ անցկացնելու մասին պաշտոնապես գրավոր պահանջով դիմելու օրվանից 6 ամսվա ընթացքում, ապա, վեճի կարգավորման միջոցի վերաբերյալ Կողմերի միջեւ այլ պայմանավորվածության բացակայության դեպքում, ցանկացած Կողմ կարող է այդ վեճը փոխանցել Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը:

### **Հոդված 14**

#### **Փոփոխությունները**

Ըստ Կողմերի ձեռք բերած համաձայնության՝ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են առանձին արձանագրություններով:

## Հողված 15

### Եզրափակիչ դրույթներ

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու, դրան միանալու եւ դրանից դուրս գալու կարգը սահմանվում է «Մաքսային միության իրավապայմանագրական բազայի ձեւավորմանն ուղղված միջազգային պայմանագրերն ուժի մեջ մտնելու, դրանցից դուրս գալու եւ դրանց միանալու կարգի մասին» 2007 թվականի հոկտեմբերի 6-ի արձանագրությամբ:

Կատարված է Մոսկվա քաղաքում, 2009 թվականի հունիսի 9-ին, մեկ բնօրինակից՝ ռուսերենով:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահվում է ավանդապահի մոտ, որը Հանձնաժողովն է:

Ավանդապահը յուրաքանչյուր Կողմին ուղարկում է սույն Արձանագրության հաստատված պատճենը:

Բելառուսի  
Հանրապետության  
Կառավարության կողմից

(ստորագրություն)

Ղազախստանի  
Հանրապետության  
Կառավարության կողմից

(ստորագրություն)

Ռուսաստանի  
Դաշնության  
Կառավարության կողմից

(ստորագրություն)